

ցու մի կարևոր մասն է, և իբրև ինքնուրոյն եկեղեցի իւր
խսկական շահերն ու քաղաքականութիւնը պէտք է ունենայ,
և այդ շահու տեսակէտից պէտք է յարաբերութիւն պահի
ուրիշ եկեղեցիների հետ Տաճկաստանում միայն կառա-
վարութեան հետ յարաբերութեան խնդիրներում:

Չափական այցելութիւններ պատրիարքաւանների միջեւ

Չափի տօնի առիթով մեր պատրիարքական Սրբազան
տեղապահը փոխադարձ այցելութիւն է տուել բուլղարների
էկզարխին և այցելել է յունաց պատրիարքին, սիրալիր
ընդունելութիւն է գտել Յունաց Սրբազան պատրիարքը
խօսել է «կալուածական, եկեղեցական և այլ խնդիրների
նկատմամբ, սրօնց մասին երկու պատրիարքարաններու
միջև դադափարի նայնութիւն կտիրէ և փափագ յայտնեց
միասին աշխատելու»:—

Բուլղարների էկզարխը խոստացել է իւր ձեռքից եկածն
անել ի նպաստ Բուլղարիայում հայ առաջնորդութիւն
հաստատելուն և տաճկահայտակների ուսուցչութիւնը
յաջողեցնելուն:

ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՅԻ

4. Պօլսոյ հայ կաթոլիկների ազգ. երես. ժողովի
եզնաժամը

Հայ կաթոլիկների պատրիարք Թերզեանը, որ այնքան
մեծ յոյսերով կաշուեց իւր արգի պաշտօնին՝ չի արդարաց-
նում իւր վերայ դրուած յոյսերը, «Երևանդիոն»ում
(ապր.ել 15) կարգում ենք, որ Սրբազան Թերզեանը պա-
հանջած է եղել, որ զուեմի Ազգային ժողով ըստւածը.» և
իմանալով որ դեռ չէ լուծուած պարսաւում է իւր փոխա-
նորդ ծամճեան եպիսկոպոսին, և հրաժայում է անմիջապէս
լուծել ժողովը և չնախագահել ժողովներին, Թերզեանի
նամակի հետ յանձնուել է ծամճեանին պապական արտա-

քին գործոց քարտուղար կարգինալ Մէրի-Դէլ Ղալ-ի հե-
 աագիրը, որով պապի անունով հրամայուած է շնախագա-
 հել երես. ժողովին, այսինքն ժողովը շպէտք է նիստ
 գումարի: Պրոպագանդայի նախագահ կարգինալ Գօթիէն
 էլ առաջադրել է իսպառ հրաժարուել նոր կանոնագրից,
 որովհետև նրա պարունակութիւնը հասարակաց շահին հա-
 կառակ է դանում: Սրանից հասկացուած է, ասում է
 Բիզանդիոնը, որ «Հռովմի մէջ նոր կանոնագրին խեղա-
 թիւրուած մէկ թարգմանութիւնը ներկայացուած է. արդէն
 ոչ երես. ժողովէն, ոչ պապիարքարանէն նոր կանոնա-
 գրին թարգմանութիւնը կամ բնագիրը չէ ուղուած:

Թերզեան սրբազանի վարժուները մեծ յուզում է ա-
 ռաջացրել հայ կաթողիկ հասարակութեան մէջ: Սրբազան
 Թերզեանը իւր պատուիրանագրութեան մէջ առ ճամճեան
 ասում է, որ իւր այս արգելքին դէմ ելժէ դաւանափոխներ
 էլ դանուեն, հոգ չէ. թող երթան, և «մաքուր կաթողիկ-
 ները միայն մնան»:

Ինչով կը վերջանայ հայ կաթողիկ հասարակութեան
 մէջ այս ճգնաժամը՝ յայտնի չէ. բայց անկասկած է այն
 անըրպետը, որ բացուած է հօտի և այնքան մեծամեծ
 յոյսերով հրաւիրուած հովուի միջև:

Հայ կաթողիկների դուրսիւնը Ռուսաստանում.

Սուրհանդակում № 291. պ. Ատրպետը տխուր գոյ-
 ներով է նկարագրում հայ կաթողիկ եկեղեցու դրութիւնը
 Ռուսաստանում: Նա ցաւելով ասում է, որ Թիֆլիզի կաթո-
 լիկական փողոցի վերայ գտնուած հայ կաթողիկների եկե-
 ղեցին, որ հիմնուած է մի հայ կաթողիկ տիկնոջ նուիրած
 հողի վերայ հայերի դրամով, այսօր լատին կղերը տիրա-
 պետել է Տիրասպօլի եպս.ի հայատեաց քաղաքականու-
 թեան շնորհիւ. և լատին կղերը համայն Ռուսաստանի
 հայ կաթողիկների առաքելական կառավարչին տեղ չի տա-
 լիս եկեղեցում. նա անճարացած՝ փոխանակ տէր կանգ-
 նելու եկեղեցուն և սեմինարիային, ստիպուած է հան-

գանակութիւն սկսել հայ կաթօլիկ նոր եկեղեցի և սեմի-
նարիա կառուցանելու համար, որ 50—60 տարուց յետոյ
լատին կղերը կարող է դարձեալ գալ և յափշտակել
Պապերի տուած շրջաբերականների ու կանոնների համա-
ձայն լատին կղերը իրաւունք չունի հայածէս եկեղեցին
լատինացնել, բայց Տիրասպօլի եպիսկոպոսի քաջալերու-
թեամբ շատ բան է կատարուել Հռովմայ պապի կամքին
ու կանոններին հակառակ:

Բանն այնտեղ է հասել, որ Թիֆլիզում և Սխաւցիսա-
յում շատ զտարիւն հայ կաթօլիկներ, մկրտուած հայ ա-
ւազանում, այսօր լատինածէս քահանաների շնորհիւ այ-
լասերուել են, ուրանալով իրանց ծագումն ու լեզուն,
միացել են այլ ազգի կաթօլիկներին, Պ. Ատրպետը գո-
վելով հանգ. Արարատեանի և Շահգուլեանի եռանդը հայ
կաթօլիկ եկեղեցին դերժ պահելու լատին կղերի յափշտա-
կութիւնից՝ ցանկանում է, որ արդի առաքելական քարո-
զիչն էլ նրանց շաւղին հետևի, հայ աւանդը սրբութեամբ
պահպանելու, հայ կաթօլիկ եկեղեցական հաստատութիւն-
ները ազատելու լատին կղերի և լատինացած, այլասեր-
ուածների յափշտակութիւնից:

Պ. Ատրպետը իւր յօդուածը վերջացնում է գրելով.
«Մենք հաւատացած ենք, որ առաքելական կառավա-
րիչը համայնքի իրաւունքի պաշտպան կը կանգնի մեծ
անձնազօհութեամբ և կազատի հայ—կաթօլիկների եկեղե-
ցին և սեմինարիայի շինութիւնը լատինական ստանձողու-
թիւններից»: